# ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻԱՑՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ

## (Միացման 140-ամյակի առթիվ)

Վ. Կ. ՈՍԿԱՆՅԱՆ

*Դեռևս XV դարից սկիզբ առած հայ-ռուսական և վրաց-ռուսական կապերի հետագա ամրապնդումը XVII դարում հասցնում է մերձեցման նոր աստիճանի, երբ ազատագրական շարժման բախտը անվերադարձորեն կապվում է Ռուսաստանի հետ, նրա քաղաքական ու ռազմական օգնության հետ։*

*Պետրոս 1-ի ժամանակ Ռուսաստանը բացահայտ կերպով կանգնում է հայերին օգնելու և նրանց ազատագրությանը ռազմական միջոցներով նպաստելու ճանապարհին։ Ակնհայտ ու անվիճելի է դառնում նաև հայերի ու վրացիների ազատագրական շարժման ռուսական կողմնորոշումը։ Դեպքերի հետագա զարգացումը շարունակությունը եղավ այն դլխավոր դծի, այն մայրուղու, որի վրա կանգնել էին մեր ժողովուրդների շահերն արտահայտող գործիչները դեռևս XVII դարից սկսած։ Հայ հայրենասեր գործիչները XVIII դարի երկրորդ կեսից նորից ծավալեցին համառ պայքար հայրենիքի ազատագրման համար, սերտ կապերի մեջ մտնելով տարեցտարի հզորացող ռուսական պետության հետ։*

*Հայ ժողովրդի բազմադարյան պատմության մեջ առանձնահատուկ նշանակություն ստացավ XIX դարի առաջին երեսնամյակը, երբ վերջնականապես լուծվեց Անդրկովկասի Ռուսաստանին միացման և նրա հետագա զարգացման հարցը։*

*1801 թ. ռուսական կայսրության կազմի մեջ մտավ Վրաստանը, որտեղ դարեր շարունակ ապրող հարյուր հազարավոր հայեր ազատվեցին պարսկական լծից և վրացիների հետ միասին իրենց բախտը կապեցին ռուս ժողովրդի և նրա հզոր պետության հետ։*

*Սակայն շահական և սուլթանական արքունիքները չէին ուզում հաշտվել Ռուսաստանի դեպի Անդրկովկաս առաջխաղացման հետ և արևմտաեվրոպական պետությունների հորդորանքներով պատերազմի էին պատրաստվում, հուսալով վերստին տիրանալ Վրաստանին և հավերժացնել իրենց տիրապետությունը Անդրկովկասի ժողովուրդների և այդ թվում՝ հայերի վրա։*

*Բոլորովին հաշվի չառնելով պարսից տիրապետությունից ազատվելու և ռուսական պրոտեկտորատի տակ մտնելու Վրաստանի ձգտումները և «անօրինական» համարելով նրա կամավոր միացումը Ռուսաստանին, շահը 1804 թ. մայիսի 23-ին ուլտիմատում ներկայացրեց՝ պահանջելով Վրաստանից դուրս բերել ռուսական զորքերը։ Սկսվեցին պատերազմական գործողությունները, որոնք շարունակվեցին 9 տարի։ Օգտվելով Ռուսաստանի միջազգային դրության լարվածությունից (պատերազմ Նապոլեոնի դեմ, ծանր պարտություն Աուստերլիցի ճակատամարտում, պատերազմ Պարսկաստանի հետ և այլն), 1806 թ. Թուրքիայի Բարձր դուռը, ուխտադրժորեն խախտելով մի տարի առաջ*

կնքած խաղաղության պայմանագիրը և այն չեղյալ հայտարարելով, պատերազմ սկսեց, հուսալով նապոլեոնական Ֆրանսիայի օգնությամբ նորից տիրանալ Ղրիմին և Վրաստանի ծովափին։

Ինչպես հայտնի է, 1804—1813 թթ. ռուս-պարսկական և 1806—1812 թթ. ռուս-թուրքական պատերազմներն ավարտվեցին Պարսկաստանի և Թուրքիայի քաղաքական ու ռազմական լիակատար պարտությամբ։ Բուխարեստի դաշնագրով Ռուսաստանին միացվեց Արևմտյան Վրաստանը (իսկ Բալկաններում՝ Բեսարաբիան)։ Գյուլիստանի պայմանագրով ճանաչվեց Կասպից ծովում նավատորմ պահելու Ռուսաստանի իրավունքը և Վրաստանի, Դաղստանի, Ղարաբաղի, Շաքիի, Բաքվի, Լոռի-Փամբակի, Շամշադինի, Զանգեզուրի ու Շորագյալի միացումը Ռուսաստանին։ Անդրկովկասի ժողովուրդների, այդ թվում հայերի, հսկայական զանգվածներ ազատվեցին արևելյան բռնակալական լծից և ամրապնդվեց հայության մյուս մասի հավատը իրենց մոտալուտ ազատագրության նկատմամբ։ Ռուսական կողմնորոշման վառ արտահայտություն էր հայերի, վրացիների ու ադրբեջանցիների եռանդուն օգնությունը ռուսական բանակին, որի հաղթարշավը խուճապի էր մատնել ինչպես Թուրքիայի ու Պարսկաստանի, այնպես և արևմտաեվրոպական պետությունների կառավարող շրջաններին։ Նրանք փորձում էին սեպ խրել Կովկասի ու Ռուսաստանի միջև և սպասում էին հարմար առիթի՝ նոր պատերազմների համար։

Անգլո-ֆրանսիական դիվանագիտության սադրանքներով պարսից արքունիքը փորձեց օգտվել 1825 թ. Ռուսաստանում ստեղծված լարված քաղաքական դրությունից և սկսեց 1826—1828 թթ. պատերազմը անսպասելի հարձակում կազմակերպելով Ղարաբաղի կայազորի, ապա նաև Թիֆլիսի վրա։ Ռուսները շուտով անցան հակահարձակման և ոչ միայն մեծ կորուստներ պատճառեցին Աբաս-Միրզայի 60 հազարանոց բանակին, այլև արագորեն առաջ շարժվեցին, մոտենալով Երևանի մատույցներին։ Բախտորոշ եղան Պարսկաստանի անդրկովկասյան տիրապետության միջնաբերդ հանդիսացող Երևանի համար մղված մարտերը, որոնք պսակվեցին հաղթանակով 1827 թ. հոկտեմբերի 1-ին և վճռեցին պատերազմի ելքը։ Զարգացնելով հաջող հարձակումը և գրավելով Թավրիզը, ռուսներն սպիտեցին պարսից զորքին նահանջել։ 1828 թ. փետրվարի 10-ին կնքվեց Թուրքմենչայի պայմանագիրը, որի համաձայն Երևանի ու Նախիջևանի խանությունները միացվեցին Ռուսաստանին և օրինականացվեց ողջ Անդրկովկասի վրա ռուսական իշխանությունը։ Պարսկաստանը մեկընդմիշտ հրաժարվեց Անդրկովկասի նկատմամբ ունեցած իր հավակնություններից, որից հետո սկսվեց ռուս-պարսկական հարաբերությունների զարգացման նոր ու խաղաղ ժամանակաշրջան։

Սակայն այս բարիդրացիական փոխհարաբերությունները ձեռնտու չէին ո՛չ թուրքական և ո՛չ էլ արևմտյան երկրների իշխող դասակարգերին։

Բալկանյան երկրներում ուժեղացող ազատագրական շարժումների նոր ալիքը բազմաթիվ աշխարհի առաջ բարձրացնում էր «Արևելյան հարցը», որն իր ծագման սկզբից իսկ դարձել էր աշխարհի հզորների գործերը կարգավորելու միջոց։ Բալկանյան և Կովկասյան ժողովուրդներին թուրքական լծից ազատելու գործիք կարող էր լինել Ռուսաստանը, որի մեջ նրանք տեսնում էին «իրենց միակ հենարանը, իրենց ազատարարին, իրենց մեսիային»[1]։

[1] К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, т. IX, էջ 389—394.

1828—1829 թթ. ռուս-թուրքական պատերազմը նոր հաղթանակներ բերեց Ռուսաստանին։ Անգլիայի ու Ֆրանսիայի խորհուրդներով սուլթան Մահմեդ II-ը շտապեց հաշտություն խնդրել՝ վերջնական ջախջախումից խուսափելու և օսմանյան կայսրության խարխլած շենքը վերահաս փլուզումից փրկելու համար։ 1829 թ. սեպտեմբերի 2-ին (14-ին) կնքվեց Ադրիանապոլսի պայմանագիրը, որը օրինականացրեց Հունաստանի անկախացումը, ընդլայնեց Մոլդավիայի, Վալախիայի ու Սերբիայի ինքնավարությունը։ Այս ամենը զգալիորեն բարելավում էին հիշյալ ժողովուրդների տնտեսական, քաղաքական ու կուլտուրական կյանքի պայմանները, ազատում կրոնական ու ազգային ճնշումներից։

Հասկանալի է, որ նույնքան բարելավվում էր նաև Բալկանների ազատագրված երկրներում՝ Հունաստանում, Մոլդավիայում ու Վալախիայում դարեր շարունակ բնակվող բազմահազար հայերի վիճակը, որոնք բարիդրացիական հարաբերությունների մեջ էին վաղուց ի վեր իրենց հյուրընկալող եղբայրական ժողովուրդների հետ։ Նշանակալի էր Ադրիանապոլսի դաշնագրի նշանակությունը կովկասահայ զանգվածների համար, քանի որ դրանով Ռուսաստանի իշխանության տակ անցան Ախալքալաքը, Ախալցխան, Սև ծովի արևելյան ափերը՝ Անապայից մինչև Փոթի։ Ադրիանապոլսի դաշնագրով Թուրքիան ճանաչեց Թուրքմենչայի պայմանագրով ձևակերպված Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին, որով ստեղծվել էր հզոր պետության հովանու տակ հայահավաքման և ազգային համախմբման մի կենտրոն։

Այսպիսով, XIX դ. առաջին երեսնամյակի ռուս-թուրքական ու ռուս-պարսկական պատերազմների հետևանքով Անդրկովկասը միացվեց Ռուսաստանին և հայ ժողովրդի պատմության մեջ սկսվեց նոր դարագլուխ, Ռուսաստանի կազմում նոր ճանապարհով ընթանալու ժամանակաշրջան։ Պատահական չէ, որ բնակչության բոլոր շերտերը հակված էին դեպի Ռուսաստան, նրա զորքին ցույց էին տալիս հնարավոր նյութական օգնություն, զենք ու մթերք հասցնում, ստեղծում կամավորական ջոկատներ, ռուսների հետ կողք-կողքի կռվում թուրք և պարսիկ զորքերի դեմ։

Ի՞նչ բերեց ռուսական տիրապետությունը հայ ժողովրդի արևելյան հատվածին, ի՞նչ հեռանկարներ էին կապում Ռուսաստանի հետ հայերը և հայ ազատագրական շարժման գործիչները։ Ռուսական պետության շահերը պահանջում էին ապահովել երկրի հարավային սահմանները Թուրքիայի, Պարսկաստանի, Ղրիմի ու Կովկասի նրանց վասալների հարձակումներից, Անդրկովկասում ստեղծել ամուր ու վստահելի պլացդարմ՝ հենվելով հայերի ու վրացիների վրա։ Ռուսական զինվորին մշտապես ներշնչում էր այն միտքը, որ նա կռվում է քրիստոնյա ժողովուրդների ազատագրության համար։ Նմանօրինակ էր ռուս ժողովրդի առաջադիմական գործիչների ու մտավորականության կարծիքն ու տրամադրությունը։ Դրանում համոզվել էին ռուսահայ գաղթավայրերի բնակիչները Մոսկվայում, Աստրախանում, Կաղանում, Ղզլարում, Պետերբուրգում, Նոր Նախիջևանում, որոնք ստացել էին առանձնաշնորհումներ, արտոնություններ, կրոնական ազատություն, որոշ ինքնավարություն, սեփական դատարան, հայկական դատաստանագրքով ղեկավարվելու իրավունք։ Թեպետ ցարական կառավարությունը Անդրկովկասում հետապնդում էր արևելքում քաղաքական ու ռազմական պլացդարմ ստեղծելու և երկրներ գրավելու ակնհայտ նպատակներ, թեպետ հայերին ու վրացիներին ազատագրելու կոչերը միայն միջոց էին

(և ոչ նպատակ), այնուամենայնիվ ռուսական հաղթարշավը լիովին համընկնում էր հայ ժողովրդի շահերին և փրկարար դեր էր խաղում նրա կյանքում։ Դա ազատագրման միակ հնարավոր ու իրական ճանապարհն էր, հյուսիսափայլով լուսավորված մայրուղին, որով գալիս էր ռուսը՝ իր հետ բերելով կյանքի, գույքի ու պատվի փրկության պայմաններ։ Ռուսական զորքերը Վրաստան ու Հայաստան գալիս էին ոչ թե որպես անկոչ հյուրեր, այլ որպես բարեկամներ ու ազատարարներ։ Ինչպես դեռևս 1846 թ. գրում էր մեծ հեղափոխական-դեմոկրատ Ն. Գ. Չերնիշևսկին, «քաղաքական պատմության մեջ ռուսները հանդես են եկել ոչ թե այնպես, ինչպես հոները ու մոնղոլները, այլ որպես փրկարարներ, փրկարարներ թաթար-մոնղոլական լծից...»[2]։

Հասկանալի է, որ ռուս-թուրքական և ռուս-պարսկական պատերազմներում միանգամայն տարբեր էին ժողովրդի ու զինվորների, ցարի, հողատերերի և կապիտալիստների նպատակներն ու գործողության մեթոդները։ «Բոլոր նրանք,— գրում է Հերցենը,— ովքեր չեն կարողանում տարբերել ռուսական կառավարությունը ռուս ժողովրդից՝ ոչինչ չեն հասկանում»[3]։ Բայց մեր քննած խնդրի համար այս քիչ է, պետք է շեշտել, որ հայերի համար նույնը չեն եղել ցարն ու սուլթանը, ցարն ու շահը, առավել ևս ռուսական պետությունն ու թուրք ու պարսիկ պետությունները, նրանց նպատակները և հայերի նկատմամբ ցուցաբերած վերաբերմունքը։ Եթե ռուսական պետության օբյեկտիվ շահերը պահանջում էին շարժվել դեպի արևելք՝ հենվելով թուրք ու պարսկական տիրողների բռնապետության տակ հեծող ժողովուրդների վրա, ապա շահական ու սուլթանական իշխանությունների շահերը պահանջում էին ոչնչացնել այդ օպոզիցիոն ուժերը։ Եվ այս ձգտումները իրենց խորանիստ կնիքն էին դրել հիշյալ երկրների ու պետությունների դարավոր քաղաքականության վրա ուրեմն և ժողովուրդների հոգեբանության ու աշխարհայեցողության վրա։ Ճիշտ է, քաղաքականությունը վարում էին իշխող դասերն ու դասակարգերը, Ալեքսանդր I-ը և Նիկոլայ «Պալկինը»։ Նիկոլայը, անձամբ դատաստան տեսնելով ռուս հեղափոխականների հետ, որոշել էր դեկաբրիստական շարժման հաղարավոր «մեղսակիցներին» ուղարկել Կովկասյան ճակատի ամենավտանգավոր տեղամասերը՝ հետապնդելով կրկնակի նպատակ. նախ՝ օգտագործել հմուտ ու քաջ զինվորականներին պատերազմի հաջող ընթացքն ապահովելու համար, ապա և ազատվել այդ համառ ու վտանգավոր ազնվականական հեղափոխականներից։ Բայց պատմություն կերտող զինվորն ու ժողովուրդը յուրովի էին ըմբռնում ու վերաբերվում այդ քաղաքականությանը, պատերազմի ընթացքում ծագող ռազմական, տնտեսական, ազգային ու կուլտուրական այլազան հարցերին։ Երբ թերթում ես Հայաստանը Թուրքական ու պարսկական լծից ազատելու համար մղված պայքարի տարեգրությունը, խորապես հասկանում ես այն մեծ ու նվիրական դերը, որ կատարել են ժողովուրդները, նրանց բարեկամական համագործակցությունը վերջին դարերի ընթացքում, մասնավորապես Անդրկովկասը Ռուսաստանին միացնելու ժամանակաշրջանում։ Այդ մասին Մուկվայի, Լենինգրադի, Թբիլիսիի և այլ արխիվներից բազմաթիվ ուշագրավ փաստաթղթեր արդեն հայտնաբերվել ու հրապարակվել են[4]։ Բավական է

[2] Н. Г. Чернышевский. Литературное наследие, т. II, 1928, էջ 44։

[3] Герцен, Сочинения, т. VII, էջ 257։

[4] Մ. Գ. Ներսիսյան, Դեկաբրիստները Հայաստանում, Ե., 1958։ Նույնի՝ Из истории русско-армянских отношений, т. I, 1956, т. II, 1960.

հիշել դեկաբրիստական շարժման ակտիվ մասնակիցներից կազմված զորամասերի հերոսական կռիվները, Երևանի գրոհները և ազատագրությունը, հայերի նկատմամբ ցուցաբերած ջերմ վերաբերմունքը, որպեսզի Հայաստանում ռուսների վարած կռիվները համարվեն ազատագրական պատերազմ։ Մեծ գրող Գրիբոեդովը, պատերազմի մասնակիցն ու հեղինակավոր ականատեսը իր օրագրում նշում է, որ իրենց այս պատերազմը «ամենամարգասիրական պատերազմն է»[5] և որ ազատագրվող հայերը նույնպես այն ընկալում են որպես այդպիսին, ռուսների հաղթանակի և Հայաստանի նվաճման համար արտահայտելով «անցյալում չտեսնված նվաճվածների ուրախությունը»[6]։ Այս բոլորը հիանալի ձևով արտահայտված է նաև Երևանի ու Հայաստանի ազատագրման կռիվների մասնակից դեկաբրիստ Լաչինովի «Օրագրություններում»[7]։ «Գրեթե բոլոր բնակիչները փակված էին բերդում,— գրում է նա։— Աննկարագրելի են ուրախության այն հուզիչ տեսարանները, որոնցով դիմավորում էին մեզ հայկական ընտանիքները... Բավական է պատկերացնել գրաշարման ժամանակ նրանց դժբախտ վիճակը, որպեսզի հավատանք նրանց արտահայտած հիացումների անկեղծությանը»[8]։ Ինչ վերաբերում է ադրբեջանական բնակչությանը՝ մահմեդականներին, որոնք սկզբում «ծուռ էին նայում», արտահայտում վախ ու կասկած, շուտով համոզվեցին, որ սխալ են. «Նրանք անգամ երևակայել չէին կարող, որ թշնամական բանակը՝ փոխանակ թալանի համար վրա պրծնելու, ջանք էր թափում հանդարտությունը վերականգնելու և համաքաղաքացի թալանչիներից բնակիչների պաշտպանության համար։ Մի քանի օր է անցել, ձեռնարկվել են բոլոր միջոցները յուրաքանչյուրի սեփականության ապահովության համար... Բնակիչները մրջյունների նման ցրվեցին, որպեսզի օգտագործեին բարենպաստ եղանակի վերջերը՝ իրենց գործերն ավարտելու համար... Հաճելի էր տեսնել կյանք ու գործունեություն այնտեղ, որտեղ քիչ առաջ թագավորում էր ավերածությունը»։ «Խաղաղասիրական վերաբերմունքը, խելամիտ ձեռնարկումները քիչ-քիչ մեղմում էին մահմեդականների ատելությունը... Ինչ վերաբերում է հայերին՝ ապա կարելի է վճռականորեն ասել, որ նրանք անկեղծությամբ նվիրված են ռուսներին... բայց ես իմ դատողությունները հիմնում եմ ոչ թե հավաստիացումների վրա, այլ ներկայացնում եմ այնպիսի ապացույցներ, որոնց հերքում հաղիվ թե հնարավոր լինի գտնել։ ...Իրենց համար ուրախալի իրադարձության մասին հարազատների խոսակցությունները մանկիկներին ներարկում են սեր դեպի ռուսները»[9]։

Լաչինովը կարծես արտահայտում է ռուս դեկաբրիստների, զինվորների ու լուսամիտ սպաների խոհերն ու զգացումները, երբ գրում էր. «Եվ այս անապատային երկրում, ուրախությունների այս գերեզմանում մենք, հայրենիքից, մեզ համար սիրելի ու թանկարժեք ամեն բանից հեռացածներս հաճույք ենք ստանում այդ բոպեներին, որոնց կնախանձեին անգամ բախտից առավել սիրված երեսառածները»[10]։ Այսպես, տանջվածներին կրկելու սրբազան ձգտում-

5 Ա. Ս. Գրիբոեդով, Ճանապարհորդական նոթեր, Երևան, 1945, էջ 61։

6 А. С. Грибоедов, Сочинения, СПб., 1889, т. I, էջ 124։

7 Տե՛ս М. Г. Нерсисян, Декабрист Е. Лачинов и его записки об Армении (Из истории русско-армянских отношений, т. I, էջ 312—397)։

8 Նույն տեղում, էջ 359։

9 Նույն տեղում, էջ 360—361։

10 Նույն տեղում, էջ 375։

ներով ու մարդասիրական սկզբունքներով էին առաջնորդվում, իրենց տրված հանձնարարությունները կատարում դեկաբրիստ ոպաները, զինվորների մասսան, նշանավոր գործիչները՝ Գրիբոեդովն ու Լաչինովը, Դենիս Դավիդովն ու Երմոլովը, Կրասովսկին և շատ ուրիշներ։ Նրանք գործակցում էին հայերի հետ, հաշվի առնում նրանց կարծիքներն ու պահանջները, օգնում և ստանում նրանց օգնությունը։

Անդրկովկասի և Արևելյան Հայաստանի ազատագրությունն ու միացումը Ռուսաստանին շրջադարձային նշանակություն ունեին հայ ժողովրդի համար և այդ լավ հասկանում ու բարձր էին գնահատում հայ գործիչները, հայ առաջավոր մարդիկ, որոնք ելնում էին հայ ժողովրդի ընդհանուր և այս կամ այն շերտի ու դասակարգի շահերից։ Պարզ էր սակայն, որ օտար լծից ազատվելը անհրաժեշտություն էր բոլոր դանդվածների, ինչպես և գաղութահայության համար, որից ամեն դասակարգ ու շերտ կուզենար օգտվել առավելագույն չափով։ Ազատագրական շարժման և Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու ժամանակաշրջանում վարվող պատերազմներում անվերապահորեն Ռուսաստանի կողմն էին և՛ Հայաստանի, և՛ հայ գաղթավայրերի բնակիչները, որոնք հնարավոր օգնություն էին հասցնում ճակատին, ստեղծում կամավորական ջոկատներ, կազմակերպում հանգանակություններ և այլն։ Նապոլեոնի 1812 թ. արշավանքի և ռուս-պարսկական պատերազմի ծանր պահին, երբ ռեակցիոն իշխանները փորձում էին օտարների սադրանքներով ապստամբել ռուսական տիրապետության դեմ, հայերը և վրաց ժողովրդի լայն զանգվածները հավատարիմ մնացին իրենց ազատագրության ծրագրին և թույլ չտվին Անդրկովկասն անջատել Ռուսաստանից։ Ալեքսանդր կայսրը Բոհեմիայից հղած իր հատուկ հրովարտակով շնորհակալություն էր հայտնում Վրաստանի հայերին՝ Ռուսաստանին նվիրվածության համար, նշելով, որ «նրանք աչքի էին ընկնում օրինակելի հաստատակամությամբ ու նվիրվածությամբ այն ժամանակ, երբ թեթևամտությունն ու ամբարիշտությունը փորձում էին երերել մեր կողմից Վրաստանում հաստատած հանգստությունը...»[11]։

Հասկանալի է, որ հայերը ամենուրեք սպասում էին ռուսների հաղթանակին ու ողջունում այն, ցանկանում անցնել ռուսական տիրապետության տակ։ Դեռևս 1806 թ. գեներալ Նեսվետաևին հաղորդում են, որ «Բայազետից մոտ 10000 հայեր ուզում են անցնել Ռուսաստանի իշխանության տակ»[12]։ Նմանօրինակ ցանկություն էին հայտնել Երմոլովին Երևանի խանության հայ բնակիչները[13]։ Բազմաթիվ դիմումներ են անում 1820-ական թթ. արևմտահայերը[14]։ Դեռևս պատերազմի պահին հեռատես գործիչները վառ հույսերով էին նայում հայոց ապագային։ Դեկաբրիստ Լաչինովը անկեղծորեն ուրախանում էր, որ հայերը ոչ միայն փրկվում էին վերահաս կորստից, այլև սրա համար, որ գալիս էր հայ մշակույթի «վերածննդի ժամանակը և մի քանի դար շարունակվող խռովահույզ քնից հետո կարող է Հայաստանի համար փայլել ծաղկման դարը

---

11 Մ. Գ. Ներսիսյան, Из истории..., т. I, էջ 153—155։

12 Տե՛ս Акты, собранные Кавказскою археографическою комиссию, т. III, փաստաթուղթ № 917։

13 Н. Дубровин, История войн и владычества русских на Кавказе, т. IV, СПб, 1888, էջ 243։

14 Տե՛ս Մ. Ներսիսյան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ, 1955, Ե, էջ 351—353։

այն գիտությունների, արհեստների ու արվեստների, որոնց հնագույն հուշարձանները այնպիսի առատությամբ սփռված են Երևանյան մարզում և մինչև այժմ էլ ապշեցնում են դիտողներին»[15]։ Ոգևորությունը, հույսն ու հավատը հայ ժողովրդի ազատագրության նկատմամբ համընդհանուր էր։ Հայ գրող Մեսրոպ Թաղիադյանը հեռավոր Հնդկաստանից ողջունեց Երևանի ազատագրումը, այն համարելով ավելի մեծ բախտավորություն, քան Արշակունիների թագավորությունը։ Իր նամակում նա գրում է. «Աչքներդ լույս, որ քաղցր աշխարհն պարսից դառն չարչարանքներից ազատվեց»[16]։ Կալկաթայում արտասանած իր ճառում Թաղիադյանը այդ պատմական ակտը բնութագրեց որպես «ազատություն հայոց աշխարհին»[17]։ Գոհունակություն էին հայտնում հայերը Պետերբուրգից, Ն. Նախիջևանից, Աստրախանից։ Ռուս զորքերի հաղթանակը Նոր Նախիջևանում նշանավորվում է եկեղեցիներում մաղթանքներ կատարելով[18]։ Երևանի ազատագրման կապակցությամբ 1827 թ. նոյեմբերին Աստրախանից Ն. Աշտարակեցուն շնորհավորական է ուղարկում Սիմեոն Սարգսյան Իվանովը։ Նա գրում է. «Ուրախալի համբաւ յաղթութեան քաջամարդ զօրացն ռուսաց հասեալ այսր, լցոյց զամենեսին խնդութեամբ ի սիրտ և հոգի, մինչ լուաք, թէ սրովն ռուսաց յիշխանութենէ բարբարոսացն պարսկաց ազատեցաւ Հինն Նախիջևան, Երևան և Թաւրեզ...»[19]։ Աշտարակեցուն Պետերբուրգից շնորհավորանք է հղում Խաչատուր Լազարևը։ Մանվել վարդապետ Կյումուշխանեցին ջերմորեն խոսում էր հայրենիքին տրված ազատության մասին, ազատություն, որ բերել էր ռուս ցարի «խոհական կառավարությունն» ու «քաջ ասպետությամբ պայծառափայլ Երևանու Ղրաֆ» Ի. Ֆ. Պասկևիչը[20]։ Համահնչուն էին նաև այլ գործիչների գնահատականները։ Բնական է, որ հայ գործիչները շնորհակալական խոսք էին հղում ռուս կայսրին և գրաֆ Պասկևիչին (որոնց հրամաններով էին առաջնորդվում ռուս զորքերը), չուզելով ու չկարողանալով տարբերել պետությունը ժողովրդից, Պասկևիչին՝ զինվորից։

Հայտնի է, որ Մադրասի հայերը Հնդկաստանի հեռաստանից ողջունում էին, ուրախություն հայտնում, որ «Արարատյան երկիրը դարավոր նախաթոռ էջմիածնի վանքի հետ մեկտեղ գտնվում է Ռուսաստանի սահմաններում»[21]։ Մադրասից մի այլ նամակում նույնպես գոհունակությամբ շեշտվում է այն, որ իրենք երկար սպասումներից հետո ստացել են «Հին Հայաստանի Ռուսաստանին միացնելու մասին բարի լուր»[22]։ Ներսես Աշտարակեցուն հասցեագրված նամակներում մի շարք հայ գործիչներ տալիս են նման գնահատականներ։ Թե ինչքան էին նախընտրում թեկուզ և ավերված ու քարքարոտ Արևելյան Հայաս-

15 М. Г. Нерсисян, Из истории..., т. I, էջ 233։

16 «Կենսագրութիւն Մեսրովպայ Դավթեան Թաղիադեանց Երևանցւոյ...», Թիֆլիս, 1886, էջ 133։

17 Տե՛ս «Ցուցակ վասն ամի տեառն 1829», տպագրեալ ի գործատուն Մարդասիրական ճեմարանի ի Կալկաթայ, էջ 248։

18 Վ. Բ. Բարխուդարյան, Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն, Երևան, 1967, էջ 314։

19 Ա. Ադամյան, Վավերագրեր հայ և ռուս ժողովուրդների բարեկամական կապերի. «Բանբեր Հայաստանի արխիվների», 1961, № 1, էջ 115։

20 Տե՛ս «Պատմութիւն անցից անցելոյ Սևանոյ վանոց, արարեալ Մանուել վարդապետի Կիւմուշխանեցւոյ ի 1830 ամի ի Սևան», 1871, Վաղարշապատ, էջ 2։

21 «Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа», т. I, էջ 301։

22 Նույն տեղում, մաս III, էջ 382 (ընդգծումները մերն են — Վ. Ռ.)։

տանը Արևմտյանից, այդ երևում է Պարսկաստանից ու Թուրքիայից գաղթել ցանկացողների դիմումներից։ Ա. Բեստուժևը գրում է, որ չնայած Ատրպատականի հայերի ներգաղթի զարհուրելի դժվարություններին և Լաղարևին տված առաջադրանքին՝ վերաբնակեցնել 30000 մարդ, ցանկություն էին հայտնել 90000։ Այդ տրամադրությունները քաջ հայտնի էին Լաղարևին, որը ներգաղթի կազմակերպումն իրեն հանձնարարելու կապակցությամբ Պասկևիչին շնորհակալություն է հայտնում. «Ձերդ պայծառափայլության կողմից այդքան հաճելի հանձնարարությունը ինձ համար՝ որպես ռուսական սպայի, մեծ պատիվ է, իսկ որպես հայի՝ կատարյալ բախտավորություն»[24]։

Արևելյան Հայաստանի միացման հենց առաջին օրերից, մասնավորապես գաղթի կազմակերպումից պարզ դարձան երկու Ռուսաստանի դիրքերը։ Եթե առաջադեմ ռուս գործիչներն ուզում էին ամեն բան անել հայերի, մասնավորապես ներգաղթողների վիճակը բարելավելու համար, ապա կայսերական արքունիքն ու նրա դրածոները զարմացնում էին իրենց անտարբերությամբ ու անհոգությամբ։ Նույն Բեստուժևը դատապարտում է իշխանություններին, որոնք հայերին բերելու համար «ոչ մի պատրաստություն չէին տեսել», թեև խոստացել էին «ոսկու սարեր»։ «Նրանց հատկացրին սպանիչ կլիմա ու անպտուղ հող ունեցող վայրեր և դրա հետ մեկտեղ աննշան դրամական օգնություն՝ այն էլ մի մասին։ Նրանց կեսը մահացավ, քառորդը ցիրուցան եղավ, վերջին քառորդը օտարության մեջ քարշ է տալիս իր աղետալի գոյությունը... Իսկապես ամոթ է ու ծիծաղելի այդ մասին խոսելը»[25]։

Ինչքան էլ կիսակատար մնային սպասումներն ու խոստումները, ինչքան էլ ծանր լիներ ցարիզմի գաղութային քաղաքականությունը, դրանք ոչ մի չափով չեն կարող նսեմացնել Հայաստանի արևելյան մասի աղատագրության հսկայական նշանակությունը։ Այդ է ասում անցյալի 140 տարին, այդ հստակորեն բնութագրել են հայ խոշորագույն մտածողներն ու գործիչները՝ սկսած Խաչատուր Աբովյանից ու Միքայել Նալբանդյանից մինչև Հովհաննես Թումանյանն ու Ստեփան Շահումյանը։ Խ. Աբովյանը իր անմահ վեպում բազմակողմանիորեն վերլուծել է Հայաստանի վիճակը, նրա աղատագրության պատմությունը, նրա հեռանկարները։ Աբովյանը կրկին ու կրկին հիշեցնում է հայերի վիճակը պարսից բռնակալների քմահաճ ու անմարդկային տիրապետության տակ. «Ռատաստան չկա, իրավունք չկա, ու հայ աղդն էլ էնքան էսպես ցավեր տեսել էր, մեկ օր խոսքը մին չէր ըլում, որ իր գլուխն աղատի։ Աղջիկն ասես՝ քաշում էին, տղեն ասես՝ տանում, շատ անգամ թուրքացնում, հավատից հանում, շատ անգամ էլ գլուխը կտրում, էրում, նահատակում։ Ոչ տունն է իրանը, ոչ մալը, ոչ ապրանքը, ոչ ջանը, ոչ օղլուշաղը»[26]։ Դրա համար է, որ հայերը պիտի կուվեին ու կուվում էին պարսիկների դեմ, «իրենց արինն էին տալի, եդո իրենց քաղաքն ու օղլուշաղը։ Ռուսաց՝ ընդհակառակը, բանալիքն էին ընծայում, եդո իրենց տունն ու ընտանիքը»[27]։

---

23 М. Г. Нерсисян, Из истории..., т. II, էջ 289—290։

24 «Собрание актов», ч. II, էջ 160։

25 «Русский вестник», т. 32, էջ 335։ Բերվում է ըստ Ներսիսյանի՝ Из истории русско-армянских отношений գրքի, էջ 289—290։

26 Խ. Աբովյան, Երկեր, հատ. 3, էջ 38։

27 Նույն տեղում, էջ 176։

Դարավոր բռնապետությունը խորհրդանշող Երևանի բերդի անկման գեղարվեստական նկարագրությամբ Խ. Աբովյանն ընթերցողներին է հասցնում այդ աղատագրական ակտի պատմական նշանակությունը, ընդգծելով, որ «դըժոխքի քանդվիլը մեղավորների համար էս դինը չէր ունենալ, ինչպես Երևանի բերդի առնիլը հայերի համար»[28]։ Նա նշում է, որ այդ փրկություն էր նաև ադրբեջանցիների՝ Հայաստանի «թուրքերի» համար։ «Երևան թևին տվեց, երբ ռուսաց զորքը իր մեջը մտան... թուրք ու հայ հենց իմացան, թե աստված վեր էկավ իրենց համար»[29]։ Աղատագրության փաստը արձանագրելով չի սահմանափակվում մեծ դեմոկրատն ու ժողովուրդների բարեկամության մունետիկը, նա իմաստուն ծրագիր է տալիս իր ժողովրդին, որի բախտը մեկընդմիշտ կապվում էր ռուս ժողովրդի ու նրա պետականության հետ։ «Քանի որ մեր բերանումը շունչ կա, պետք է դիշեր-ցերեկ մեր քաշած օրերը մտքներս բերենք ու ռսի երես տեսնելիս՝ երեսներիս խաչ հանենք»[30]։ Հ. Թումանյանը, Խ. Աբովյանի դաղափարակիցն ու երկրպագուն, ճիշտ ու սպառիչ գնահատական է տվել նրա պատմավեպին։ «Խ. Աբովյանը մոլեռանդ ռուսասեր էր, նրա «Վերք Հայաստանին» հայ ժողովրդի տանջանքի ու տենչանքի արտահայտությունը լինելով հանդերձ, միաժամանակ մի ոգևորված ջատագովություն է ռուս ազգին ու նրա պետական ուժին, և առաջ քաշել Խաչատուր Աբովյանին՝ կնշանակի հայերի մեջ արծարծել նաև սեր ու համակրանք դեպի ռուս ազգն ու ռուս պետությունը»[31]։ Աբովյանը չէր սահմանափակվում կատարվածի գնահատումով, նա հասկանում էր, որ ռուսների հետ բախտը կապելով, հայերը կանգնելու են իրենց տնտեսական, քաղաքական ու կուլտուրական զարգացման վստահելի մայրուղու վրա։ Նա կոչ է անում՝ «Աշխատենք ըստ մեր կարողության և հնարավորության ձեռք բերել օդտավետ դիտություններ, կրթել մեր միտքն ու սիրտը, ձեռք բերել ռուս լեզվի դիտություն և բարի քաղաքացիներ լինել։ Սրանով, հենց միակ սրանով մենք կարող կլինենք միանալ ռուս մեծ ազգի հետ, որի միայն անունը ներշնչում է ամենքին, մինչև իսկ օտարին, սեր և անձնվիրություն...»[32]։ Խ. Աբովյանը, հայերի, վրացիների և ադրբեջանցիների բարեկամության ջատագովը, կոչ է անում Անդրկովկասի ժողովուրդներին միավորել ուժերը ռուսների հետ՝ թշնամուն հաղթելու համար. «Վոլգա, իմ մեծ քեռ, ես, քույր իմ Երասխ, համբույր մատուսցուք ի Կասպեան կոհակ։ Նա զիւր բարութիւն, ես զիմ խնդութիւն ի մի մեր մօր ծոց ընդ միմեանս խառնեսցուք»[33]։ Աբովյանը շատ մեծ հույսեր էր կապում այդ բարեկամության ու համագործակցության հետ, երբ պիտի ջնջվեր Զինդիկ խանի և Լենկթեմուրի հիշատակը և սկսվեր խաղաղ շինարարության շրջանը։ «Միայն քանդելու էին սովոր ասիացիք, շինություն ու խաղաղություն տեսան»[34]։

Աբովյանը, ինչպես և Վրաստանի ու Ադրբեջանի առաջավոր մարդիկ մեծ հեռանկարներ էին կապում Ռուսաստանի հետ հատկապես լուսավորության ու կուլտուրայի զարդացման ուղղությամբ։

---

28 Նույն տեղում, էջ 179։
29 Նույն տեղում, էջ 177։
30 Նույն տեղում, էջ 58։
31 Հ. Թ ու մ ա ն յ ա ն, Երկեր, հատ. VI, էջ 200։
32 Դիվան Խ. Աբովյանի, հատ. I, Ե, 1940, էջ 158։
33 Խ. Ա բ ո վ յ ա ն, Երկեր, հատ. III, էջ 371։
34 Նույն տեղում, էջ 176։

Մ. Նալբանդյանը բարձր էր գնահատում ռուս ժողովրդի դերը, նրա դեմոկրատական կուլտուրան և մշտապես ընդգծում էր հեղափոխական վերակազմությունների համար ժողովուրդների համատեղ պայքարի անհրաժեշտությունը։ «Ռուսիո ազատությունը ընդհանուր մարդկության վերաբերությամբ մեծ խորհուրդ ունի»[35]։ Նա չէր բացասում ազգային-ազատագրական պայքարի անհրաժեշտությունը Արևմտյան Հայաստանում, որտեղ սակայն չկային սոցիալական ու ազգային ազատագրության համար ժողովուրդների համատեղ պայքարի պայմաններ և անգամ հեռանկարներ, բայց և անհնարին էր հանդուրժել դարավոր լուծը։ «Այսօր,— գրում էր նա,— ճնշված մարդկերի համար ազգությունն է նոցա միակ դրոշը, որ կարող է բացվիլ բռնակալության ընդդեմ»[36]։ Ազգի ազատությունը հիմնական նպատակներից էր։ Այդ է վկայում նրա «Իտալացի աղջկա երգը», մի կրքոտ կոչ՝ թեկուզ կյանքը զոհաբերել ազգի փրկության համար.

Ամենայն տեղ մահը մի է,
Մարդ մի անգամ պիտ մեռնե,
Բայց Երանի որ յուր ազգի
Ազատության կզոհվի[37]։

Նալբանդյանը նախընտրում է Ռուսաստանի տիրապետությունը Թուրքիայի տիրապետությունից, շեշտելով, որ եվրոպական տերությունները անդադար օգնություն են ցույց տալիս Թուրքիային, որպեսզի նա դիմանա և չկործանվի, «որպեսզի Թուրքիո ստրկացած հայ, սլավոն և հույն ժողովուրդը քաղաքակրթիչ հոգաբարձվից չզրկվի», «Ավետարանից թերևս ազատություն կարող է ծագել, իսկ Կուրանից այդ երկյուղը չկա»[38]։ Նալբանդյանը (ինչպես և հայ դեմոկրատական մտքի ներկայացուցիչների հետագա սերունդը) հասկանում էր, որ արևմտահայության ազատագրման համար մղված պայքարում ևս կարելի է ակնկալել միայն Ռուսաստանի օգնությունը։ Հայ մեծ բանաստեղծ Թումանյանը բացառիկ խորությամբ վերլուծել է հայ-ռուսական կապերի պատմությունը և ճիշտ բնութագրել Հայաստանի Ռուսաստանին միացման պատմական նշանակությունը։ «Անցյալ դարու սկզբից Ռուսաստանը մտավ Կովկասի սահմաններն ու սկսեց իր պարսկական պատերազմները։ Էդ պատերազմները... ազգային սրբազան պատերազմի նշանակություն ունեին հայերի համար։ Վճռվում էր պարսկա-հայկական հարցը... Հայ ժողովուրդը ազատվում է պարսկական դժոխքից»[39]։ Այդպես մասամբ լուծվում էր թուրքական տիրապետության տակ գտնվող հայության ազատագրման հարցը (Սև ծովի ափերին, Վրաստանում, ապա և բուն Հայաստանում)։ Թումանյանը նշում է, որ Ռուսաստանը 1829, 1855 և 1878 թվականների ռուս-թուրքական պատերազմների ժամանակ «իր ձեռքի տակ բերելով Ալեքսանդրապոլն ու Ղարսը և այլ շրջաններ— էդ մասերում էլ լուծեց հայ ժողովրդի կյանքի, գույքի և պատվի հարցը»[40]։ Իսկ Անգլիան «ամեն կերպ աշխատել է միշտ Ռուսաստանի դեմ ստեղ-

35 Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. III, էջ 61։
36 Նույն տեղում, էջ 90։
37 Նույն տեղում, հատ. I, էջ 97։
38 Նույն տեղում, հատ. III, էջ 89 (ընդգծումը իմն է — Վ. Ո.)։
39 Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հատ. IV, էջ 231։
40 Նույն տեղում, էջ 231։

ծել մի պատվար, պաշտպանել է մերթ Պարսկաստանին, մերթ Տաճկաստանին և առհասարակ Ռուսաստանին թշնամի ամեն մի ուժ...»[41], «...Ով Ռուսաստանի դեմ պաշտպանել է Տաճկաստանին, նա մեղսակից է տաճկական գազանություններին, հայկական սարսավիներին։ Նա պատասխանատու է հայ ժողովրդի ծով արյան և մարդկության պատմության առաջ»[42]։ Մի քանի անգամ հայ ժողովուրդը, որ... իր համակրանքն ու սերը բաց ցույց էր տվել ռուսներին՝ Անգլիայի ձեռքով մատնվել է տաճիկ կառավարության վրեժխնդրության կատաղությանը», մինչդեռ «մեր մեջ հավատ կա արմատացած, թե Անգլիան ու Ֆրանսիան եղել են հայկական հարցի բարեկամները։ Ինձ թվում է մեզ էս քաղցր մոլորության մեջ են գցել Գլադստոնի, Դիլլոնի, Բերարի, Պրեսանսեի նման լավ մարդկանց ճառերը... Իսկ իրենց պետությունները, որը միշտ եղել են Ռուսաստանի զորացման դեմ Արևելքում, դրա հետ միասին միշտ էլ դեմ են եղել հայկական հարցին»[43]։

Պատմության փորձությունները էլ ավելի ամրացրին հայերի և ռուսների բարեկամությունը։ Արևելյան Հայաստանի, ինչպես նաև Վրաստանում, Ադրբեջանում, Ուկրաինայում, Ռուսաստանում բնակվող հայության հետագա ամբողջ պատմությունն ընթացավ ռուս ժողովրդի, նրա բարձրացող մեծ կուլտուրայի բարերար ազդեցության տակ, ապրելով խոշոր վերելք։

Ռուսական պրոլետարիատի հերոսական պայքարի օրինակով, մյուս եղբայրական ժողովուրդների հետ միասին, հայ աշխատավորական զանգվածները շարունակեցին իրենց գոտեմարտերը ազգային ու սոցիալական ճնշումների դեմ։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը նոր հորիզոններ բացեց սովետական աշխարհի առաջ, վերածնվող հայության առաջ։ Դեռևս կես դար չի անցել մեր ժողովրդի վերջնական փրկության բախտորոշ պահից, այնինչ Սովետական Հայաստանը դարձել է բարձր զարգացման հասած արդյունաբերության և գյուղատնտեսության առաջավոր հանրապետություն, գրականության, արվեստի, գիտության ու լուսավորության աննախընթաց վերելքի երկիր։

## ПРИСОЕДИНЕНИЕ ВОСТОЧНОЙ АРМЕНИИ К РОССИИ

(К 140-летию присоединения)

В. К. ВОСКАНЯН

**(Резюме)**

Армянский народ, еще в средние века потерявший свою государственность и оказавшийся под невыносимым гнетом султанской Турции и шахской Персии, вел неравную, но упорную борьбу за свое освобождение. Во второй половине XVII в. окончательно сформировалась русская ориентация армянского освободительного движения. Присоединение Грузии и Азербайджана к России избавило от опасности физиче-

41 Նույն տեղում, էջ 229։
42 Նույն տեղում, էջ 230—231։
43 Նույն տեղում, էջ 231—232։

ского уничтожения огромные массы армянского населения Закавказья и открыло пути освобождения Восточной Армении, что и было осуществлено в результате русско-персидской (1826—1828) и русско-турецкой (1828—1829) войн. Народы Закавказья, в том числе и армянский народ, считали эти войны справедливыми и освободительными. Прогрессивные деятели России делали все, чтобы облегчить участь армянского народа, оказать ему братскую помощь.

Присоединение Армении к России вызвало глубокое удовлетворение во всей Армении и в армянских колониях, рассеянных по всему миру. Вхождение Восточной Армении в состав русского государства способствовало совместной борьбе трудящихся России за свое социальное и национальное освобождение.